

## Պաղեստինի Պետության Նախագահ՝ Մահմուտ Ապպաս Ճանաչման Գիր Կը Յանձնէ Երուսաղէմի Նորընտիր Հայ Պատրիարքին

Հինգշաբթի, 28 Փետրուար 2013-ին, կէսօրուան ժամը 12ին, Ընտրեալ Պատրիարք՝ Տ. Նուրհան Արք. Մանուկեան, ընկերակցութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Տ. Մեան Արք. Ղարիպեանի, Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զաքարեանի, Աւագ Թարգման՝ Գուսան Վրդ. Ալճանեանի, Տ. Բագրատ Վրդ. Պուրճէքեանի, Տ. Նորայր Վրդ. Գազազեանի, ուղուեցաւ դէպի Ռամալլայի Մուրաթաս նախագահական ապարանքը՝ ստանալու պաշտօնական ճանաչման գիրը:

Արդէն հոն կը սպասէին Բերթեհէմի Բարեջան Տեսուչ՝ Տ. Խաղ վարդապետն ու Վանքի Փաստաբան՝ Բաէտ Ամայան, որոնք հոն եկած էին ժամ մը առաջ, փրոթոքոլային պատշաճ կարգադրութիւնները տեսնելու:

Նախագահական Ապարանքի մուտքին, Պատրիարք Սրբազան Հայրը դիմաւորուեցաւ Քրիստոնէից Բաժնի Նախագահական Յանձնաժողովի նախագահ՝ Հաննա Ամիրէի եւ Նախագահական Աւագանիի ներկայացուցիչներու կողմէ: Ջերմ դիմաւորութենէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը եւ Սրբոց Յակոբեանց Միաբանական Ուխտի ներկայացուցիչները առաջնորդուեցան Նախագահին ժողովասրահը: Մի քանի րոպէ անց, Ժողովասրահ մուտք գործեց Նախագահ՝ Մահմուտ Ապպաս, որ ողջունեց Նորին Ամենապատուութիւնը ու անոր ընկերակցող Սրբոց Յակոբեանց Միաբանական Ուխտի ներկայացուցիչները:

Նորին Վսեմութիւն Պաղեստինի Պետության Նախագահ Մահմուտ Ապպաս շնորհաւորեց Ս. Պատրիարք Հայրը իր ընտրութեան առիթով, եւ Ճանաչման գիրի ընթերցումէն ետք, յանձնեց զայն Պատրիարք Սրբազան Հօր անոր հետ յուշանուէր մը եւս յանձնելով: Նախագահ Ապպաս իր խօսքին մէջ շեշտեց, թէ Երուսաղէմի Հայ Պատրիարքութիւնը եւ գաղութը անմասն բաժինն են Պաղեստինի եւ անոր Պետության, Հայ Ժողովուրդը եւ Պաղեստինի Ժողովուրդը համանման ճակատագիր ունեցած են, եւ ի գուր չէր որ հանգուցեալ Նախագահ՝ Եասէր Արաֆաթ կը սիրէր արտայայտուիլ «Արաֆաթեան» ազգանունը շեշտելով:

Նախագահ Ապպասի խօսքէն վերջ, Պատրիարք Սրբազան Հայրը խօսք առաւ ու շնորհակալութիւն յայտնեց Նախագահ Ապպասին իր ընտրութեան ճանաչման եւ հաստատման համար եւ վստահեցուց Նորին Վսեմութիւնը թէ Սրբոց Յակոբեանց Ուխտը պիտի շարունակէ իր ուխտեալ ծառայութիւնը Սուրբ Երկրի մէջ, միշտ պաշտպանելով հաւատքի ու խղճի ազատութիւնը:

Պաշտօնական խօսքերին ետք, բոլոր ներկաները նստեցան ու վայելեցին մտերմիկ խօսակցութիւնը Նախագահին ու անոր ասօցիանին: Խմբանկարը առնուելէ ետք, Նախագահ Ապպաս բարի երթ մաղթեց Ս. Պատրիարք Հօր ու ողջագործումէն ետք, Պատրիարք Սրբազան Հայրն ու Միաբանութեան անդամները վերադարձան Սրբոց Յակոբեանց Մայրավանք:



Պաղեստինի Պետութեան Նախագահ՝ Վսեմաշուք Մահմուտ Ապպաս  
Ճանաչման Գիր կը յանձնէ Նորընտիր Պատրիարք Սրբազան Հօր:

